

րացողի մը գործն էր այդ, նոյնպէս չէին անշուշտ միւս մեծատանց « անառակ եւ գուսանամուլ գինարբուքն՝ » որոց դէմ կը յարձակէր նոյն ժամանակի բեմբասաց Մանդակունին (135): Կը տեսնենք, եւ Եղիշէէ ոչ շատ հեռի, որ այդ անկարգութիւնը կ'ընկերէ մեր իշխանաց՝ մենաստանաց պարկեշտ որմերէն ներս անգամ: Ներսէս Երնոզն է՝ որ կ'աւանդէ այս ուշագրաւ պարագայն՝ իւր կանոնաց մէջ: « Ոմանք յազատաց եւ ի ռամիկ հեծելոց », որ են գինուորականք, հասնելով՝ կ'ըսէ՝ որ եւ է գիւղ, կը թողուն գիւղն ու կ'իջեւանին մերձաւոր վանուց մէջ, եւ « գուսանօք եւ վարձակօք պղծեն զնուիրեալ տեղիսն Աստուծոյ » (ԾԲ): Այնքան մոլութեամբ փարած էին այդ կորուսելոց, որ պտոյտի ժամանակ անգամ չէին ուզեր զատուիլ աղոցմէ:

27. — Արբեցութիւնք: — Ա. Այդ սանձարձակ զբօսանաց անձնատուր մարդոց ինչ բան կրնար չափ դնել կոկորդի: Բացարձակապէս ոչ ինչ. եւ անոնք բնաւ սահման չունին « գինարբութեան » մէջ. բառ մը սա՝ որ իւր անսեթեւեթ պարզութեանը մէջ կը խտացնէ մեր հանդիսին այս երկրորդ մասին ամբողջ նշանակութիւնը. խմել, եւ միշտ խմել: Ո՞չ ապաքէն ասոր